ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

«21» դեկտեմբերի 2011Թ. N 172

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱԼ ՊԱՐՈՆ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Ի կատարումն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի վեցերորդ մասի՝ Ձեզ է ուղարկվում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Սարդարապատի գյուղական համայնքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Սարդարապատ համայնքի 2012 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 41 -Ն որոշումը:

Միաժամանակ հայտնվում է, որ նշված որոշումը սահմանված կարգով ներկայացվել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական իրավական փորձաքննության:

Առդիր՝ 110թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Բ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 12423-11
«22» 12 2011 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

«16 » դեկտեմբերի 2011թ. թիվ 41 -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2012ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով, 54-րդ հոդվածով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի երկրորդ մասով և «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ և 33-րդ հոդվածներով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Սարդարապատ համայնքի 2012 թվականի բյուջեն՝ եկամուտների գծով՝ 83320.8 հազար դրամ, ծախսերի գծով՝ 83320.8 հազար դրամ, դեֆիցիտը /պակասորդ/0.0հազար դրամ՝ համաձայն հավելվածի:
2. Հաստատել համայնքի բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների՝ համաձայն հատված 1-ի:
3. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական դասակարգման՝ համաձայն հատված 2-ի:
4. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 3-ի:

5. Հաստատել համայնքի բյուջեի միջոցների տարեվերջի հավելուրդը կամ դեֆիցիտը /պակասորդը/՝ համաձայն հատված 4-ի:
6. Հաստատել համայնքի բյուջեի դեֆիցիտի / պակասորդի/ ֆինանսավորման աղբյուրները կամ հավելուրդի օգտագործման ուղղությունները՝ համաձայն հատված 5-ի:
7. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 6-ի:
8. Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի բյուջեի կատարման ընթացքում կատարելու վերաբաշխումներ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման ծախսերի նախատեսված հոդվածների միջև:
9. Սահմանել, որ փոփոխությունների հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել չափաքանակների 50 տոկոսը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

1.Մելքոնյան Վաչագան
2.Մինասյան Ժիրայր
3.Հայրապետյան Ալբերտ
4.Օզմանյան Ալիկ
5.Հովհաննիսյան Տիգրան
6.Համբարձումյան Խաչիկ
7.Հարությունյան Սերոբ
8.Մնացականյան Շիղան
~~9.Մինասյան Կարապետ~~
10. Դավթյան Միասնիկ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Բ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

2011 թվականի դեկտեմբերի 16

գ. Սարդարապատ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԴԱՐԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N41 - Ն ՈՐՈՇՄԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Սարդարապատի գյուղական համայնքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Սարդարապատ համայնքի 2012 թվականի բյուջեն հաստատելու մասին» N41-Ն որոշման ընդունումը պայմանավորված է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետի պահանջով և դրա անհրաժեշտությունը կայանում է նրանում, որ այն ուղղված է համայնքի զարգացմանը նպաստելուն՝ բյուջետային համակարգի միասնականությունն ապահովող բյուջետային գործընթացի կազմակերպման համաձայնեցված սկզբունքների, բյուջետային դասակարգման, հաշվառման և հաշվետվության միասնական մեթոդաբանության հիման վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Բ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Սարդարապատի գյուղական համայնքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Սարդարապատ համայնքի 2012 թվականի բյուջեն հաստատելու մասին» N41 -Ն որոշման ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտություն չկա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Բ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՈՒՂԵՐՁ

ՍԱՐԴԱՐԱՊԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012Թ. ԲՅՈՒՋԵԻ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» և « Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքներով Ձեր քննարկմանն է ներկայացվում Սարդարապատի գյուղական համայնքի 2012 թվականի բյուջեն:

Սարդարապատ գյուղական համայնքի 2012 թվականի բյուջեն կազմվել է համայնքի ղեկավարի քառամյա ծրագրի դրույթներին համապատասխան:

ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Սարդարապատ գյուղական համայնքի 2012թ. բյուջեով կանխատեսվել են եկամուտներ՝ Ընդամենը 83320.8 հազար դրամ;

Սարդարապատ գյուղական համայնքի 2012թ. բյուջեով սեփական եկամուտները կանխատեսվել է 22000.0 հազար դրամ: Պետության կողմից պատվիրակված լիազորությունների համար միջոցները 600.0 հազար դրամ: Պետական բյուջեից տրվող դոտացիան՝ 60720.8հազար դրամ:

2012թվականին հարկերի գծով նախատեսվել է 20550.0հազար դրամ, որից 1100.0հազար դրամ շենք. շին. գույքահարկ, 16450.0հազար դրամ հողի հարկ և 3000.0 հազար դրամ փոխադրամիջոցների գույքահարկ:

Կանխատեսման համար հիմք է հանդիսացել գույքահարկի և հողի հարկի հաշվարկման և գանձնման հաշվարկները:

Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարների գծով՝ տեղական տուրքեր նախատեսվել է

500.0 հազար դրամ:

Պաշտոնական դրամաշնորհների գծով՝ դոտացիա 60720.8 հազար դրամ՝ հիմք «Պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքը:

Պետության կողմից պատվիրակված լիազորությունների համար միջոցները 600.0 հազար դրամ:

Այլ եկամուտների գծով նախատեսվել է 950.0հազար դրամ:

Եկամուտները ըստ եկամտատեսակների՝ կից հատված 1-ին համապատասխան՝ կից տեղեկություններ: Նախորդ 2010թվականի փաստացի կատարված, 2011թվականի հաստատված և 2012թվականի նախատեսված եկամուտների համեմատականը կցվում է (համեմատական 1):

ԾԱԽՍԵՐ

Սարդարապատ գյուղական համայնքի 2012թվականի բյուջեով ծախսերը նախատեսվել են՝ Ընդամենը 83320.8 հազար դրամ,

այդ թվում՝

Ընթացիկ ծախսերի գծով՝ 69720.8 հազար դրամ,իսկ կապիտալ ծախսերի համար 13600.0 հազար դրամ:

Սարդարապատի գյուղական համայնքի 2012թվականի բյուջեով նախատեսված ծախսերը ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման կցվում (հատված 2,3,6):

Համայնքի 2012 թվականի բյուջեի ծախսերը հաշվարկելիս առաջնորդվել ենք 2010-2011թ,թ բյուջեի փաստացի կատարված և 2012թ. սպասվելիք ծախսերով:

ԾԱԽՍԵՐԸ ԲԱՇԽՎԵԼ ԵՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ 01 ԲԱԺԻՆ

ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ 47100.8 ԱՋԱՐ ԴՐԱՄ, ԱՅԴ ԹՎՈՒՄ

01բաժին 1 խումբ 1 դաս՝ «Օրնսդիր և գործադիր մարմիններ» ծրագրով նախատեսվել է 45210.0 հազար դրամ,որից ընթացիկ ծախս՝31610.0հազ. դրամ , իսկ 13600.0 հազար դրամ կապիտալ ծախս :

01բաժին 3 խումբ 3 դաս՝ «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» ծրագրով նախատեսվել է 200.0հազար դրամ՝համակարգչային ծառայությունների համար:

01բաժին 6խումբ 1 դաս՝ «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ» ծրագրով նախատեսվել է 1690.8.0հազար դրամ:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 04 ԲԱԺԻՆ

ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ 3600.0 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ, ԱՅԴ ԹՎՈՒՄ

04 բաժին 2 խումբ 1 դաս՝ «Գյուղատնտեսություն» ծրագրով 600.0 հազար դրամ:

04 բաժին 5 խումբ 1 դաս՝ « ճանապարհային տրանսպորտ» ծրագրով 3000.0հազար դրամ ընթացիկ ծախս :

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ 05 ԲԱԺԻՆ

ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ 6430.0 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ, ԱՅԴ ԹՎՈՒՄ

05 բաժին 1 խումբ 1 դաս՝ «Աղբահանում» ծրագրով 6430.0 հազար դրամ:

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ)

06 ԲԱԺԻՆ ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ 11500.0 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ, ԱՅԴ ԹՎՈՒՄ

06 բաժին 3 խումբ 1 դաս՝ « Ջրամատակարարում» ծրագրով 10000.0 հազար դրամ:

06բաժին 4 խումբ 1 դաս՝ « Փողոցների լուսավորում » ծրագրով 1500.0 հազար դրամ:

ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ 08 ԲԱԺԻՆ

ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ 3290.0 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ, ԱՅԴ ԹՎՈՒՄ

08 բաժին 2 խումբ 1 դաս՝ « Գրադարաններ » ծրագրով 745.0 հազար դրամ,որից 745.0հազար դրամ ընթացիկ ծախս:

08 բաժին 2 խումբ 3 դաս՝ « Մշակույթի տներ , ակումբներ » ծրագրով 745.0 հազար դրամ:

08 բաժին 2 խումբ 4 դաս՝ «Այլ մշակույթային հիմնարկներ» ծրագրով 1500.0 հազար դրամ: Այս ծրագրում ընդգրկվել են համայնքային նշանակության միջոցառումների գծով ծախսերը:

08 բաժին 3 խումբ 1 դաս՝ « Հեռուստահաղորդումներ » ծրագրով 300.0 հազար դրամ:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ 09 ԲԱԺԻՆ

ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ 6000.0 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ, ԱՅԴ ԹՎՈՒՄ

09բաժին 1 խումբ 1 դաս՝ «Նախադպրոցական կրթություն » ծրագրով 6000.0 հազար դրամ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ 10 ԲԱԺԻՆ

ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ 5400.0 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ, ԱՅԴ ԹՎՈՒՄ

10 բաժին 7 խումբ 1 դաս՝ « Սոցիալական հատուկ արտոնություններ(այլ դասերին չպատկանող)» ծրագրով նախատեսվել է 5400.0 հազար դրամ: Այս ծրագրում ընդգրկվել են թաղման ծախսերի մասնակի հատուցման համար , սոցիալապես անապահով խավերին մասնակի օգնության կազմակերպություններին աջակցության համար ծախսերը: Օգնությունները տրվում են տարին մեկ անգամ համայնքի ղեկավարի որոշմամբ՝ քաղաքացիների դիմումների ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա:

ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ 11 ԲԱԺԻՆ

ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ 13600.0 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ, ԱՅԴ ԹՎՈՒՄ

11 բաժին 1 խումբ 2 դաս՝ «ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ» 13600.0հազար դրամ, որից 13600.0 ուղղվել է ֆոնդային բյուջե՝ կապիտալ ծախսեր կատարելու համար:

Նախորդ 2010թվականի փաստացի կատարված, 2011թվականի հաստատված և 2012թվականի նախատեսված ծախսերի՝ գործառնական և տնտեսագիտական դասակարգման, դիֆիցիտի, մարման աղբյուրների ,

առանձին ցուցանիշների համեմատականները կցվում են (համեմատական 2,3,4,5,6):

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Բ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ 6

ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ , ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ և ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

հ/հ	Պաշտոնի անվանումը	Պաշտոնի ծածկագիրը	դրույքը	2011թ.-ին հաստատված դրույքաչափը (հազար դրամ)	2012թ.-ին հաստատված դրույքաչափը (հազար դրամ)
1	Համայնքի ղեկավար		1	180,0	180,0
2	Համայնքի ղեկավարի տեղակալ		1	144,0	144,0
3	Աշխատակազմի քարտուղար	1--2--1	1	144,0	144,0
4	Գլխավոր մասնագետ	2.-3--1	1	144,0	144,0
5	Առաջատար մասնագետ	3--1--1	1	105,0	105,0
6	Առաջատար մասնագետ	3--1--2	1	105,0	105,0
7	1-ին կարգի մասնագետ	3--2--1	1	80,0	80,0
8	2-րդ կարգի մասնագետ	3--3-1	1	60,0	60,0
9	Պահակ		1	50,0	50,0
10	Պահակ (եկեղեցու)		1	35,0	35,0
11	Աղբաթափող		1	100,0	100,0
12	Հավաքարար		1	35,0	35,0
13	Գրադարանավար		1	50,0	50,0
14	Մանկապարտեզի վարիչ		1	66,0	66,0
15	Հաշվապահ		1	32,5	32,5
16	Դաստիարակ		0,5	32,5	32,5
17	Դաստիարակ		0,5	32,5	32,5
18	Դաստիարակ		0,5	32,5	32,5
19	Դաստիարակ		0,5	32,5	32,5
20	Դաստիարակ		0,5	32,5	32,5
21	Դաստիարակ		0,5	32,5	32,5

22	Դաստիարակի օգնական		1	32,5	32,5
23	Դաստիարակի օգնական		1	32,5	32,5
24	Դաստիարակի օգնական		1	32,5	32,5
25	Դաշնակահար		1	32,5	32,5
26	Խոհարար		1	32,5	32,5
27	Բուժքույր		1	32,5	32,5
28	Տնտեսվար		1	32,5	32,5
29	Պահակ		1	50,0	50,0
30	Գերեզմանի պահակ		1	35,0	35,0
	Ընդամենը			1838,0	1838,0

Տեղեկություններ

Սարդարապատի գյուղական համայնքի

գույքահարկի և հողի հարկի, հողերի և այլ գույքի վարձակալության վարձավճարներ

գծով առանձին ցուցանիշների վերաբերյալ

Տողի NN	Եկամտատեսակները	ապառքը տարեսկզբի դրությամբ 01.01.2011թ.	ապառքը տարեվերջի դրությամբ 01.10.2011թ.
1	Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար	3000,0	4085,6
2	Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողերի համար	142517,9	156189,5
3	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	40157,0	42547,1
4	Հողերի վարձակալության վարձավճարներ	300,0	480,0
5	Այլ գույքի վարձակալության վարձավճարներ	0,0	0,0

ների

(հազար դրամով)

տվյալ տարվա հաշվարկային գումարը
1100,0
16450,0
3000,0
650,0
0,0